ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակին վճարման ենթակա տուրքերի մասին թիվ 2869/95 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝ Հանձնաժողովի 2005 թվականի հունիսի 29–ի թիվ 1042/2005 կանոնակարգ (ԵՀ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Խորհրդի «Համայնքի ապրանքային նշանի մասին» 1993 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 40/94 կանոնակարգը (ԵՀ)[1] և, մասնավորապես, դրա 139-րդ հոդվածը,

Քանի որ.

1) համաձայն Խորհրդի «Համայնքի ապրանքային նշանի մասին» թիվ 40/94 կանոնակարգը (ԵՀ) կիրարկող՝ Հանձնաժողովի 1995 թվականի դեկտեմբերի 13–ի թիվ 2868/95 կանոնակարգով[2] կիրարկվող թիվ 40/94 կանոնակարգի (ԵՀ)՝ որոնման վերաբերյալ հաշվետվությունների, ապրանքային նշանի հայտը տարանջատելու կամ գրանցելու և վարույթները շարունակելու համար պետք է սահմանել լրացուցիչ տուրքեր։Այդ նոր տուրքերի չափը պետք է ամրագրել,

2) որոնման համակարգը կամընտիր է դառնում 2008 թվականի մարտի 10–ից, ինչպես նախատեսված է Խորհրդի թիվ 422/2004 կանոնակարգի (ԵՀ) 2–րդ հոդվածի 2–րդ պարբերությամբ։ Այդ օրվանից պետք է կիրառվի լրացուցիչ տուրք՝ ներպետական որոնման վերաբերյալ հաշվետվությունների համար,

3) հետևաբար, պետք է համապատասխան փոփոխություններ կատարվեն Հանձնաժողովի թիվ 2869/95 կանոնակարգում (ԵՀ)[3],

4) սույն Կանոնակարգում նախատեսված միջոցները համապատասխանում են Տուրքերի հարցերով կոմիտեի եզրակացությանը, Կիրարկող կանոններին և Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակի բողոքարկման խորհուրդների ընթացակարգին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

---

[1] ՊՏ, L 11, 14.01.1994թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 422/2004 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 70, 9.3.2004թ., էջ 1):

[2] ՊՏ, L 303, 15.12.1995թ., էջ 1: Թիվ 782/2004 (ԵՀ) կանոնակարգով (ՊՏ, L 123, 27.04.2004թ., էջ 88) փոփոխված կանոնակարգ:

[3] ՊՏ, L 303, 15.12.1995թ., էջ 33: Թիվ 781/2004 (ԵՀ) կանոնակարգով (ՊՏ, L 123, 27.04.2004թ., էջ 85) փոփոխված կանոնակարգ:

Հոդված 1

Թիվ 2869/95 կանոնակարգում (ԵՀ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 2–րդ հոդվածի աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) ավելացնել հետևյալ բովանդակությամբ 1ա կետը.

«1ա. Որոնման համար տուրք ա) Համայնքի ապրանքային նշանի հայտի համար (հոդված 39«2», կանոն 4«գ»). բ) Եվրոպական համայնքի տարածքն ընդգրկելու մասին նշում պարունակող միջազգային գրանցման համար (հոդվածներ 39«2» և 150«2», կանոն 10«2»):	12 եվրոն բազմապատկած Կանոնակարգի 39–րդ հոդվածում նշված արդյունաբերական սեփականության կենտրոնական գրասենյակների թվով. այդ գումարը և դրա հետագա փոփոխությունները Գրասենյակի կողմից հրապարակվում են Գրասենյակի պաշտոնական տեղեկագրում»:

բ) 6-րդ կետը հանել.

գ) 13–րդ կետում «Անհատական նշանի համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք» արտահայտությունը փոխարինել «Անհատական նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք» արտահայտությամբ.

դ) 15–րդ կետում «Կոլեկտիվ նշանի համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք» արտահայտությունը փոխարինել «Կոլեկտիվ նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք» արտահայտությամբ.

ե) 19–րդ կետում «Մինչև իրավունքի կորուստը եղած դրության վերականգնման համար տուրք» արտահայտությունը փոխարինել «Մինչև իրավունքի կորուստը եղած դրության վերականգնման մասին դիմումի համար տուրք» արտահայտությամբ.

զ) 20–րդ կետում «Փոխակերպման համար տուրք» արտահայտությունը փոխարինել «Փոխակերպման դիմումի համար տուրք» արտահայտությամբ.

է) 21-րդ և 22-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«21. Վարույթները շարունակելու համար տուրք (Հոդված 78ա «1»)	400
22. Համայնքի գրանցված ապրանքային նշանը (Հոդված 48ա «4») կամ Համայնքի ապրանքային նշանի հայտը (Հոդված 44ա «4») տարանջատելու մասին դիմումի համար տուրք	250»

ը) 23-րդ կետում ներածական արտահայտությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Համայնքի գրանցված ապրանքային նշանի հետ կապված լիցենզիայի կամ մեկ այլ իրավունքի գրանցման մասին դիմումի (հոդված 157«2»–ի 5–րդ կետ, կանոն 33«1») կամ Համայնքի ապրանքային նշանի հայտի (հոդված 157«2»–ի 6–րդ կետ, կանոն 33«4») համար տուրք.».

թ) 29-րդ կետից հանել հետևյալ տողը.

«նաև յուրաքանչյուր էջի համար՝ 10-ից ավելի լինելու դեպքում	1»

2. 13-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գումարը վերադարձվում է թիվ 2868/95 կանոնակարգի (ԵՀ) կանոն 113«2»«բ» և «գ»–ի կամ կանոն 115 «5»«բ», «գ» և «6»–ի համաձայն Միջազգային բյուրոյին հաղորդում տալուց հետո։»։

Հոդված 2

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

2. Հոդված 1«1»–ի «ա» կետը կիրառվում է 2008 թվականի մարտի 10–ից։

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անդամ պետությունների համար և դրանցում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 2005 թվականի հունիսի 19-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Չարլի Մաքքրիվի

Հանձնաժողովի անդամ